



## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ-ԶԵՎԱԶԱՓ

### ՄԱՍ 1

Լրացված է՝ հիմք ընդունելով Ծրագրի նպատակը, խնդիրները, օգտվելով համապատասխան լիազոր մարմինների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու շրջակա միջավայրի նախարարությունների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներից, Սյունիքի մարզպետարանի և համայնքի կայքերից, Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) տվյալներից, Տարածքային զարգացման հիմնադրամի կայքից, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից փոքր ՀԷԿ-երի և հանքարդյունաբերական ընկերությունների ոլորտներում կատարված ուսումնասիրությունների տվյալների բազայից, պաշտոնական այլ փաստաթղթերից և ստորագրված պայմանագրերից:

### Ընդհանուր տվյալներ համայնքի մասին

#### Մարզ՝ Սյունիք

#### Համայնք՝ Միսիան

Համայնքի ղեկավար- ՀՀ վարչապետի 25 օգոստոսի 2021թ. 901-Ա որոշմամբ համայնքի ղեկավարի պաշտոնակատար է նշանակվել Արմեն Հակոբջանյանը:

Համայնքի էլեկտրոնային կայք՝ <https://www.sisian.am/>

Համայնքի ավագանին բաղկացած է 15 անձից

Համայնքի ավագանու անդամներ (անուն, ազգանուն)՝

1. Վ Այվազյան
2. Վ. Առաքելյան
3. Հ. Առաքելյան
4. Գ. Գևորգյան
5. Դ. Համբարձումյան
6. Հ. Հայրապետյան
7. Ա. Հարությունյան
8. Մ. Հարությունյան

- 9. Գ. Հովհաննիսյան
- 10. Է. Հովհաննիսյան
- 11. Ք. Ղարիբյան
- 12. Ա. Միրզախանյան
- 13. Ն. Ներսիսյան
- 14. Վ. Պողոսյան
- 15. Բ. Ստեփանյան

Համայնքի կազմում ընդգրկված են հետևյալ բնակավայրերը՝

Սիսիան և Դաստակերտ քաղաքներ, Դարբաս, Շամբ, Ախլաթյան, Թանահատ, Շաքի, Աղիտու, Թասիկ, Շենաթաղ, Անգեղակոթ, Իշխանասար, Որոտնավան, Աշոտավան, Լծեն, Սալվարդ, Արևիս, Լոր, Վաղատին, Բալաք, Հացավան, Տոլորս, Բնունիս, Մուցք, Տորունիք, Բոնակոթ, Նժդեհ, Ցղունի, Գետաթաղ, Նորավան, Ույծ, Շաղատ գյուղեր:

### **Համայնքի սոցիալական, տարիքային, գենդերային պրոֆիլ**

**Համայնքի բնակչության ընդհանուր թիվն**, ըստ Սիսիանի համայնքապետարանի պաշտոնական կայքի<sup>1</sup>, 2021թ. սեպտեմբերի դրությամբ կազմում է 30365 մարդ, որից արական՝ 15725 մարդ, իգական՝ 14641 մարդ: Տարիքային կազմը՝ 0-6 տարեկան՝ 2428 մարդ, 7-17 տարեկան՝ 4199 մարդ, 18-65 տարեկան՝ 20427 մարդ, 66 և ավելի տարեկան՝ 3311 մարդ: Տնային տնտեսությունների թիվը՝ 7547, որից 1 շնչից բաղկացած՝ 1432:

Համայնքի նպաստառու ընտանիքների թիվը կազմել է 446, կենսաթոշակառուների թիվը՝ 4271<sup>2</sup>:

Համայնքի վարչական տարածքի մակերեսը կազմում է 123380.42 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերինը՝ 112358,87 հա:

Ըստ համայնքապետարանի պաշտոնական կայքի<sup>3</sup> ազդակիր բնակավայրերի նպատակային նշանակության հողերի մակերեսները կազմում են.

**Էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների հողեր** Սիսիան քաղաք՝ 17.68 հա, Ույծ՝ 6.48 հա, Աղիտու՝ 17.54 հա, Շաղատ՝ 24.06 հա, Նժդեհ՝ 1 հա, Դաստակերտ՝ 3.10 հա, Վաղատին՝ 10 հա, Դարբաս՝ 11.45 հա, Շենաթաղ՝ 7 հա, Լոր՝ 4 հա, Արևիս՝ 2.76 հա, Թասիկ՝ 3 հա, Շաքի՝ 16 հա, Անգեղակոթ՝ 17 հա:

**Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի ընդհանուր մակերեսը** կազմում է 2156 հա, որից՝ Սիսիան քաղաք՝ 49.77 հա, Ույծ՝ 24 հա, Աղիտու՝ 2.84 հա, Շաղատ՝ 8 հա, Նժդեհ՝ 5 հա, Դաստակերտ՝ 0.23 հա,

<sup>1</sup> <https://www.sisian.am/Pages/Registry/Demographic/DemographicMain.aspx>

<sup>2</sup> <https://www.sisian.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbeb4291>

<sup>3</sup> <https://www.sisian.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbeb4291>

Վաղատին՝ 15 հա, Դարբաս՝ 9 հա, Շենաթաղ՝ 5 հա, Լոր՝ 2.0 հա, Արևիս՝ 1757 հա, Թասիկ՝ 3 հա, Շաքի՝ 59 հա, Անգեղակոթ՝ 17 հա:

**Համայնքի անտառային հողերի մակերեսը 4110 հա է, անտառապատվածությունը՝ 68,44%:**

Ըստ մարզային կայքերի՝ Սիսիան քաղաքում անտառային հողերի մակերեսը 598.03 հա է: Ըստ Սյունիքի մարզպետարանի կայքի՝ Դարբաս բնակավայր՝ անտառային հողեր՝ 271 հա, որից անտառածածկ՝ 271 հա: Շամբ բնակավայր՝ անտառային հողեր՝ 271 հա, որից անտառածածկ՝ 271 հա: Շաքի բնակավայր՝ անտառային հողեր՝ 53 հա, որից անտառածածկ՝ 53 հա: Թասիկ՝ անտառային հողեր՝ 58 հա, որից անտառածածկ՝ 2 հա: Շենաթաղ՝ անտառային հողեր՝ 134 հա, որից անտառածածկ՝ 134 հա: Անգեղակոթ՝ անտառային հողեր՝ 173 հա, որից անտառածածկ՝ 145 հա (Անգեղակոթի 2017-2021թթ. զարգացման ծրագրում գրված է. «չկան անտառածածկ տարածքներ»): Որոտնավան՝ անտառային հողեր՝ 109 հա, որից անտառածածկ՝ 45 հա: Աշոտավան՝ անտառային հողեր՝ 94 հա, որից անտառածածկ՝ 94 հա: Լծեն՝ անտառային հողեր՝ 200 հա, որից անտառածածկ՝ 200 հա: Արևիս՝ անտառային հողեր՝ 880 հա, որից անտառածածկ՝ 621 հա: Լոր՝ անտառային հողեր՝ 50 հա, որից անտառածածկ՝ 50 հա: Բալաք՝ անտառային հողեր՝ 7 հա, որից անտառածածկ՝ 7 հա: Տոլորս՝ անտառային հողեր՝ 204 հա, որից անտառածածկ՝ 204 հա: Մուցք՝ անտառային հողեր՝ 69 հա, որից անտառածածկ՝ 66 հա: Բոնակոթ՝ անտառային հողեր՝ 166 հա, որից անտառածածկ՝ 166 հա: Գետաթաղ՝ անտառային հողեր՝ 229 հա, որից անտառածածկ՝ 229 հա: Ույծ՝ անտառային հողեր՝ 418 հա, որից անտառածածկ՝ 43 հա: Շաղատ՝ անտառային հողեր՝ 398 հա, որից անտառածածկ՝ 398 հա):

**Համայնքի սոցիալական և բնապահպանական բացահայտված խնդիրներն՝ ըստ համայնքի անձնագրի և սոցիալ-տնտեսական զարգացման վերջին գործող ծրագրի**

Աղքատության ցուցանիշը 4.1% է՝ ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2019թ.» հրապարակման<sup>4</sup>: Ըստ Սիսիանի զբաղվածության կենտրոնի՝ 2017 թվականի դրությամբ համայնքի քաղաքային բնակավայրերում գրանցված գործազուրկների թիվը կազմել է 955 մարդ, որից կանայք՝ 641, տղամարդիկ՝ 314: Զբաղվածների թիվը կազմել է 3189 մարդ:

**Ռոռզման և խմելու ջրերի հասանելիությունն ազդակիր բնակավայրերում՝**

**Սիսիանում** անբարեկարգ վիճակում են ռոռզման ցանցերը:

**Ույծում** բացակայում է ռոռզման ներքին ցանցը: Ույծն ունի 24-ժամյա խմելու ջրով ապահովվածություն:

<sup>4</sup> <https://armstat.am/am/?nid=82&id=2217>

**Աղիտում** նույնպես բացակայում է ոռոգման ցանցը: Անմխիթար վիճակում են գտնվում Աղիտուի խմելու ջրի ներքին ցանցը, համայնքի պարզարանները:

**Անգեղակոթում** խմելու ջրի մանրեագերծում և ֆիլտրում չի կատարվում, ջրմուղ-կոյուղին բացակայում է: Ոռոգման ջուրը բավարար չէ: Ոռոգման ջրագիծը քայքայված է: Անգեղակոթում է գտնվում Անգեղակոթի ջրամբարը:

**Շաղատում**, ըստ 2017-2022թթ. զարգացման ծրագրի, 2016 թվականին կատարվել է խմելու ջրի կապտածների վերանորոգում, փականների տեղադրում: Շաղատում ոռոգման ցանցն անբարեկարգ է:

Ըստ **Նժդեհի** զարգացման ծրագրի՝ համայնքի զարգացման անմիջական նպատակներից է համայնքի ոռոգման ջրի պաշարների կորստի նվազեցումը, ոռոգման ջրի ջրատարների վերանորոգումը, իսկ մարզպետարանի և համայնքապետարանների մոտ 15 մլն. դրամ ներդրումների շնորհիվ 50 տոկոսով լուծվել է բնակչությանը խմելու ջրով ապահովելու խնդիրը:

**Դաստակերտում** առկա են խմելու ջրի ներհամայնքային համակարգի մաշվածության, խմելու ջրի ջրավազանի վթարայնության, կոյուղագծերի մաշվածության խնդիրներ: Ոռոգման ցանցն ունի մաքման անհրաժեշտություն:

**Վաղատինում** անբարեկարգ վիճակում է ոռոգման համակարգը, բացակայում է կոյուղու կոլեկտորը, առկա է խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգման խնդիրը:

**Դարբասում** բացակայում է ոռոգման ցանցը: Գյուղի տարածքում է գտնվում Շամբի ջրամբարը, ինչը նախատեսված է նաև ոռոգման նպատակներով օգտագործման համար: Դարբասում չկա կենտրոնացված կոյուղի և մաքրման կայան, կեղտաջրերը թափվում են Լորագետ: 2017-2021թթ. նախատեսվող ծրագրերից է Դարբաս համայնքի Դարբաս-Շենաթաղ խմելու ջրի ջրագծի և ներքին ցանցի և Դարբաս համայնքում 2կմ երկարությամբ ոռոգման ցանցի կառուցումը:

**Շենաթաղում** խմելու ջրի ներհամայնքային համակարգը բարվոք վիճակում է: Ունի ներցանցային ոռոգման ջրի համակարգ, որի վիճակի մասին ոչինչ նշված չէ:

**Լորում** 2017-2019թթ. զարգացման ծրագրով նախատեսվել է ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգման և ջրամատակարարման բարելավման ուղղությամբ միջոցառումների իրականացում: Լորում առկա է խմելու ջրի ներհամայնքային համակարգի բարելավման խնդիր:

**Արևիսում** բացակայում է ոռոգման ներքին ցանցը: Խմելու ջրի բարելավմանն ուղղված լուծումներ ծրագրում չի հիշատակվում:

**Թասիկում**, ըստ զարգացման ծրագրի, հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրերից ու միջոցառումներից են

խմելու ջրի ներքին ցանցի նորոգումը, ոռոգման համակարգի կառուցումը, ջրընդունիչների և ջրատարի կառուցում (KFW բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագիր):

### **Առողջապահական սպասարկման հաստատություններ**

Միսիան համայնքում կա 50 հիվանդի համար նախատեսված 1 հիվանդանոց: Համայնքում գործում է 6 ատամնաբուժական կենտրոն և 5 դեղատուն:

Շենաթաղում, Լորում, Շաքիում, Շաղատում, Արևիսում, Թասիկում Ույծում, Աղիտուում գործում են բուժկետեր, Անգեղակոթում բուժամբուլատորիա: Նժդեհի զարգացման ծրագրում բուժկետի կամ բուժամբուլատորիայի մասին նշված չէ: Դաստակերտի բուժսպասարկումն իրականացվում է «Միսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից:

Դարբաս բնակավայրում գործում է «Դարբասի առողջության կենտրոն» ՓԲԸ-ն, որը սպասարկում է նաև հարևան գյուղական համայնքների բնակչությանը:

### **Կրթության հասանելիություն (նախադպրոցական, դպրոցական, արհեստագործական, բարձրագույն ուսումնական հաստատություններ)**

Միսիան քաղաքում գործում է 1 ավագ, 4 հիմնական դպրոց, 6 արտադպրոցական հաստատություն, 4 նախակրթարան, 1 ԲՈՒՀ և 1 քոլեջ, 1-ական ֆուտբոլի, շախմատի, երաժշտական, պարարվեստի, գեղարվեստի դպրոց, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն:

Դարբասում, Շաղատում, Անգեղակոթում, Աղիտուում, Ույծում, Թասիկում, Շաքիում՝ մեկական դպրոց և նախակրթարան:

Նժդեհ, Վաղատին, Լոր, Արևիս բնակավայրերն ունեն մեկական հանրակրթական դպրոց, նախակրթարան՝ չունեն:

Դաստակերտ՝ 1 դպրոց, 1 երաժշտական դպրոց:

### **Համայնքի ուժեղ կողմեր**

Գյուղատնտեսության զարգացման համար ռեսուրսների առկայություն: Էոլոզիապես մաքուր միջավայր, համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքների էկոլոգիապես մաքուր որակ, գյուղատնտեսության և անասնապահության զարգացման հեռանկարներ, կապի և հաղորդակցության միջոցների համակարգերի առկայություն, զբոսաշրջության զարգացման նախադրյալներ /գրավիչ պատմամշակութային հարուստ ժառանգություն, բնության հուշարձաններ և օբյեկտներ:

### **Համայնքի թույլ կողմեր**

Սոցիալապես անապահով ընտանիքների, միայնակ թոշակառուների, ցածր եկամուտ ունեցողների հարաբերական մեծ թիվը, համայնքում գործազրկության բարձր ցուցանիշը, փորձառու մասնագետների արտագաղթը, ձեռնարկությունների միջև համագործակցության բացակայությունը, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակը, անբարեկարգ ոռոգման ցանցերը, գյուղատնտեսական մթերքների շուկայի և առևտրաարդյունաբերական ապրանքների տոնավաճառի բացակայությունը, տուրիստական կենտրոնի և տուրիզմի զարգացմանը նպաստող, բնակչության անվտանգության ապահովման ժամանակակից ենթակառուցյունների բացակայությունը:

**Համայնքի վարչական տարածքում մետաղական հանքավայրեր շահագործող կամ վերամշակող կազմակերպություններ (կազմակերպություն, արդյունահանվող կամ վերամշակվող հանքաքար)**

Համայնքի տարածքում 2 ընկերություններ ունեցել են մետաղական հանքավայրի շահագործման իրավունք, որոնք են՝ «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ն (Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքավայր) և «Մարջան Մայնինգ Քոնփանի» ՍՊԸ-ն (Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայր): Սակայն՝

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 29.07.2020 թվականի թիվ 1008-Ա հրամանով դադարեցվել է «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ի ընդերքօգտագործման իրավունքը Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքավայրի նկատմամբ, ուժը կորցրած է ճանաչվել լեռնահատկացման ակտը, և լուծվել է օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-174 պայմանագիրը:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների 29.07.2020թ. թիվ 1078-Ա հրամանով դադարեցվել է «Մարջան Մայնինգ Քոնփանի» ՍՊԸ-ի ընդերքօգտագործման իրավունքը Արևիս բնակավայրի Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի նկատմամբ՝ ընդերքօգտագործման թիվ ՊՎ-398 պայմանագրի 3.4 կետի 3.4.1, 3.4.4 ենթակետերով նախատեսված պայմանների խախտումները 90-օրյա ժամկետում չվերացնելու համար:

**Համայնքի վարչական տարածքում ոչ մետաղական հանքավայրեր շահագործող կազմակերպությունները և ընդերքօգտագործման պայմանագրերով նրանց ստանձնած պարտավորություններն են՝**

1. «Նարեկ-ՍԷԱ» ՍՊԸ, ՀՀ Սյունիքի մարզ, Շաքիի անդեզիտաբազալտ, /3-րդ տեղ. Հյուսիսային և հարավային թևեր/, ՇԱԹՎ-29/248 31.10.12թ., 17.08.2024թ., ՊՎ-248 31.10.12թ., հանքավայրի մակերեսը՝ 0,8 հա, տարեկան արտադրությունը՝ 41,0 հազ. խմ, ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման օժանդակության պարտավորություններ չի ստանձնել:
2. «Արմմանյու» ՍՊԸ, ՀՀ Սյունիքի մարզ, Շաքիի բազալտներ /4-րդ տեղ./, ՇԱԹ-29/281 28.12.12թ., 28.12.2062թ. Պ-281 28.12.12թ. հանքավայրի մակերեսը՝ 1,06 հա,

տարեկան արտադրությունը՝ 79,0 հզ խմ, ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնել է 500,0 հազ. դրամ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման օժանդակության պարտավորություն:

3. «Ժայռակոփ» ՍՊԸ, ՀՀ Սյունիքի մարզ, Անգեղակոթի բազալտ, ՇԱԹ-29/461 22.04.13թ., 22.04.2063թ., Պ-29/461 22.04.13թ., հանքավայրի մակերեսը՝ 1,59 հա, տարեկան արտադրությունը՝ 4,0 հազ. խմ, ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսել է, դպրոցի, մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների համար տրամադրել ինքնարժեքով շինարարական քար, դպրոցի կարիքների համար ամեն տարի 200,0 հազ. դրամ գումարով անհրաժեշտ ուսումնական պարագաների ձեռք բերում, ամեն տարի 200,0 հազ. դրամ գումար տրամադրել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում, սոցիալապես անապահով ընտանիքներին դրամադրել 200,0 հազ. դրամի դեղորայք:

4. «Չոր Չոր» ՍՊԸ, ՀՀ Սյունիքի մարզ, Անգեղակոթի բազալտ /Չոր –Չոր տեղ./, ՇԱԹ-29/ 473 12.08.13թ., 12.08.2063թ., Պ-473 12.08.13թ., հանքավայրի մակերեսը՝ 1,28 հա, տարեկան արտադրությունը՝ 166,7 հազ. խմ, ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսել է՝ համայնքի տարածքից աշխատանքի ընդունել 25 բնակչի, վերանորոգել Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների հուշարձանը՝ դրա համար հատկացնելով 500,0 հազ. դրամ գումար, յուրաքանչյուր տարի համայնքի ճանապարհների ձևամաքման, բարեկարգման վրա 200,0 հազ. դրամ, դպրոցի վերանորոգման համար՝ 500,0 հազ. դրամ:

Ըստ Անգեղակոթի 2017-2021թթ. զարգացման ծրագրի՝ գյուղի տարածքում առկա է 6 քարի վերամշակման արտադրամաս, 5 քարի հանք:

5. ԱԶ «Կամսար Մակարյան», ՇԱԹՎ-29/137, Շաքիի անդեզիտաբազալտների և բազալտների հանքավայրի «Նապաստակի ձոր» և «Գոմեր» տեղամասեր, 2010-2035թթ. ժամկետով, հանքավայրի մակերեսը 1,05հա, տարեկան արտադրությունը՝ 3,0 հազ. խմ, ընդերքօգտագործման պայմանագրով չի նախատեսել համայնքի զարգացմանն օժանդակելու պարտավորություն:

6. «Միսիան-Շիկ» ՓԲԸ, ՇԱԹ – 29/176, ՀՀ Սյունիքի մարզի Շաքիի անդեզիտաբազալտների հանքավայրի 1-ին, 2-րդ, 3-րդ և հարավային տեղամասեր, 2005-2030թթ. ժամկետով, հանքավայրի մակերեսը՝ 13,4 հա, տարեկան արտադրությունը՝ 1171,4 խմ, ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման օժանդակության պարտավորություններ չի ստանձնել:

7. «Միսիան ՇԻԿ» ՓԲԸ, ՇԱԹ-29/610, ՀՀ Սյունիքի մարզի Հացավանի ավազակոպճազլաքարային հանքավայր, մինչև 08.11.2044թ., հանքավայրի մակերեսը՝ 1,97 հա, տարեկան արտադրությունը՝ 27800.0 խմ, ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի դպրոցի և մանկապարտեզի համար ստանձնել է տարեկան 100,0 հազ. դրամ օժանդակություն, 85,0 հազ. դրամ՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման օժանդակության պարտավորություններ:

8. «Սալբեկա» ՍՊԸ, ՇԱԹ-29/204, ՀՀ Սյունիքի մարզի Ադիտուի բազալտի հանքավայր, 2011-2035թթ. ժամկետով հանքավայրի մակերեսը՝ 2,53 հա, տարեկան արտադրությունը՝ 1859,0 խմ, ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման օժանդակության պարտավորություններ չի ստանձնել:

9. «Վի Էյջ Սթոուն» ՍՊԸ, Շաքիի բազալտի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասեր, ՇԱԹՎ 29/209. 2006-2025թթ. ժամկետով, հանքավայրի մակերեսը՝ 3,52 հա, տարեկան արտադրությունը՝ 270,0 հազ. խմ, ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման օժանդակության պարտավորություններ չի ստանձնել:

10. «ԲԱԶԱԼՏ 7» ՍՊԸ. ՇԱԹՎ 29/604, ՀՀ Սյունիքի մարզի Անգեղակոթի բազալտի հանքավայր, մինչև 15.03.2064թ. հանքավայրի մակերեսը՝ 10,54 հա, տարեկան արտադրությունը՝ 16543,0 խմ, ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսել է ամեն տարի համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին ցուցաբերել 120.0 հազ. դրամի մասնակցություն. սոցիալապես անապահով ընտանիքներին ամեն տարի ցուցաբերել 50.0 հազ. դրամի դեղորայքի օժանդակություն, համայնքի տրամադրության տակ գտնվող տեխնիկայի վերանորոգման աշխատանքներին ամեն տարի ցուցաբերել 80.0 հազ. դրամի մասնակցություն:

**Համայնքի վարչական տարածքում շահագործվող ՀԷԿ/ՓՀԷԿ-եր (ՓՀԷԿ-ի շահագործող ընկերությունների (ընկերության կամ ՀԷԿ-ի անվանումը, տեղակայման գետը, կամ համակարգը, այլ բնութագրիչներ) վերաբերյալ**

1. «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ, շահագործում է «Որոտան» հիդրոէլեկտրակայանների համակարգը:

«Որոտան» հիդրոէլեկտրակայանների համակարգը բաղկացած է 3՝ Տաթև, Սպանդարյան և Շամբ ՀԷԿ-երից, որոնք տեղաբաշխված են Որոտան գետի և վտակների վրա: Համակարգի հիդրոէլեկտրակայանների ընդհանուր սխեման ունի հետևյալ տեսքը. համակարգի գլխամասային Սպանդարյան ջրամբարից ճնշման թունելով ջուրը հասնում է «Սպանդարյան» ՀԷԿ: ՀԷԿ-ից ներքև կառուցված է Անգեղակոթի պատվարը, որը կազմավորում է Անգեղակոթի ջրամբարը: Այս ջրամբարից ոչ ճնշման թունելով ջուրը տեղափոխվում է Սիսիան և Այրի վտակների վրա կազմավորված Տոլորսի ջրամբար: Տոլորսի ջրամբարից ճնշման թունելով ջուրը տրվում է «Շամբ» ՀԷԿ-ի՝ կայանից ներքև կառուցված Տաթև ջրամբարը՝ Մարգարտաձաղկի տեսք ունեցող հազվագյուտ ջրթափ կառույցով: Տաթևի ջրամբարից ոչ ճնշման թունելով ջուրը հասնում է օրվա կարգավորման ջրավազան, որտեղից էլ տուրբինային խողովակաշարով՝ «Տաթև» ՀԷԿ: ՀՀ կառավարության 21.11.2013թ. №1496-Ա որոշմամբ «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի գույքային համալիրի հիմնական մասն օտարվեց «Քոնթուր Գլոբալ ՀիդրոԿասկադ» ՓԲԸ-ին:

**ՓՀԷԿ-եր՝**

1. «Ապրես» փոքր ՀԷԿ, Ույծ բնակավայր: ՓՀԷԿ-ը կառուցված է Որոտան գետի վրա (երկարությունը՝ 178 կմ): ՓՀԷԿ-ը շահագործում է «Սյունիք» ՍՊԸ-ն:

2. «Իշխանասար» փոքր ՀԷԿ, Աղիտու բնակավայր: Կառուցված է Որոտան գետի վրա (երկարությունը՝ 178 կմ): ՓՀԷԿ-ը շահագործում է «Միեզերք» ՍՊԸ-ն:

3. «Սմբուլ» փոքր ՀԷԿ, Անգեղակոթ բնակավայր: ՓՀԷԿ-ը ջրառ իրականացնում է «Սմբուլի ջուր» կոչվող աղբյուրից: ՓՀԷԿ-ը շահագործում է «Սմբուլ» ՍՊԸ-ն:

4. «Մանուկ» փոքր ՀԷԿ, Անգեղակոթ բնակավայր: ՓՀԷԿ-ը շահագործում է «Սմբուլ» ՍՊԸ-ն, օգտագործում է Վարդան Զորավար աղբյուրների ջրերը,

5. «Անգեղակոթ» փոքր ՀԷԿ, Անգեղակոթ բնակավայր: ՓՀԷԿ-ը շահագործում է «Ժ ԵՎ Կ ՀԷԿ» ՍՊԸ-ն: Այն օգտագործում է «Զաղացի աղբյուր»-ի խմելու ջրերը:





մը	ծող ընկե րությ ունը	ջրաղբյ ուրը	վայրը	յունը, կՎտ	էներգի այի փաստա ցի միջին տարեկ ան օգտակ ար առաքու մը, մլն. կ վտժ	Արտադրվա ծ էլեկտրաէն երգիայի ապրանքայ ին արժեքը, հազ. դրամ	Արտա դրված էլեկտ ր. քանա կությո ւնը, կվտ/ժ ամ	էլեկտր. քանակությունը, կվտ. ժամ աղբյուր՝ <a href="https://setcenter.am/uploads/pages/6/b7820cdc8f5a79310ad9141100474643.pdf">.https://setcenter.a m/uploads/pages/6/ b7820cdc8f5a79310 ad9141100474643.p df,</a>
«Ապրես»	«Սյու նիք» ՍՊԸ	Որոտ ան	Ույծ	1500	8,8	234842,4	8,242,7 00	6,395,376
«Իշխանա սար»	Միեգ երք» ՍՊԸ	Որոտ ան	Աղիտ ու	2063, 9	14,7	386294,8	13,367, 300	10,015,158
«Սմբուլ»	«Սմբ ուլ» ՍՊԸ	«Սմբու լի ջուր»	Անգեղ ակոթ	110	0,9	20815,5	864,50 0	585,206
«Մանուկ »	«Սմբ ուլ» ՍՊԸ	Վարդ ան Զորավ ար աղբյու րն	Անգեղ ակոթ	38	0,0	517,8	21,500	11,944
«Անգեղա կոթ»	«Ժ ԵՎ Կ ՀԷԿ» ՍՊԸ	«Զաղ ացի աղբյու ր»-ի խմելու ջուր	Անգեղ ակոթ	150	0,5	11099,1	461,00 0	300,663
«Գետափ »	«Ֆիր մա Գ.Ա. Խ» ՍՊԸ	Որոտ անի Արագ իլ վտակ	Շաղա տ	3469	1,2	128159,2	4,469,5 00	2,950,786
«Շաղատ »	«Շաղ ատ» ՍՊԸ	Որոտ անի Արագ իլ վտակ	Շաղա տ	55	0,2	2777,3	116,10 0	83,857
«Այրի»	«Զոր	Որոտ	Նժդեհ	1280	2,4	64562,4	2,695,3	1,977,193

	աքա ր» ՓԲԸ	անի Այրի վտակ					00	
«Դաստա կերս»	«Բաս ա շին» ՍՊԸ	Այրիի վտակ Կըշկո շտի	Դաստ ակեր տ	1404, 0	1,2	32848,0	1,374,6 00	1,028,137
«ԶՈՐ- ԶՈՐ ՀԷԿ-1»-	«Պար գև և Վար դան» ՍՊԸ	Որոտ անի Վաղու դ վտակ ի	Վաղա տին	280	1,1	26136,3	1,086,4 00	718,247
«ԶՈՐ- ԶՈՐ-2»	«Էնե րգոձ որ» ՍՊԸ	Որոտ անի Վաղու դ վտակ ի	Վաղա տին	140	0,5	15681,4	543,50 0	392,838
«Դարբա ս»	«Աֆ ամի ա» ՍՊԸ-	Որոտ անի Լորաձ որ վտակ	Դարբ աս	904	2,2	51671,3	4,026,5 00	1,196,344
«Լեոնաշ են-1»	«Գու րգեն- Մհեր » ՍՊԸ	Որոտ անի Լեոնա շեն վտակ	Շենաթ աղ	719,3	1,5	34854,8	1,456,4 00	1,101,190
«Լոր ՀԷԿ-1»	«Վեհ Լորե ն»ՍՊ Ը	Որոտ անի Լորաձ որ վտակ	Լոր և Շենաթ աղ	991	1,5	44482,0	1,858,5 00	1,216,772
«Արևիս- 1»	«Աքս ատի» ՍՊԸ	Միսի ան գետի Գիժ վտակ	Արևիս և Թասի կ	1259, 4	2,5	71471,1	2,486,4 00	1,858,57
«Բենզար էներջի»	«Բեն զար էներջ ի» ՍՊԸ	Որոտ անի Զոր- Զոր վտակ	Որոտ ան և Վաղա տին	279	0,9	23152,3	885,80 0	875,766

		ի						
«Հակոբջանյան և Գալստյան» ՍՊԸ	«Շաքի»	Շաքի գետ	Շաքի	840	3,8	86675,8	4,004,800	2,777,968
«Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ	Որոտան հիդրոկասկադ	Որոտան գետ և նրա վտակներ	Գորիս և Սիսիան համայնքներ	404.2 մՎտ	1.16 մլրդ կՎտ. ժա	17027705, 9	983,643,900	345,524,799

2020թ-ի դրությամբ համայնքի բնապահպանական բնութագիրն՝ ըստ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի<sup>5</sup> և պաշտոնական ու ոչ պաշտոնական այլ աղբյուրների

### Համայնքի մթնոլորտային օդի որակը

Ինչպես Սիսիան և Դաստակերտ քաղաքում, այնպես էլ համայնքի մնացած բնակավայրերում ՊՈԱԿ-ը օդի որակի և աղտոտիչների բաղադրության չափումների դիտակետեր չունի և չափումներ չի իրականացնում<sup>6</sup>:

### Համայնքի տարածքով հոսող գետերի աղտոտվածության մակարդակը

- Որոտան գետի ջրի որակը ակունքում 2020թ. հունիս ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Որոտան գետի ջրի որակը, ըստ Սիսիանից ներքև և «Տաթև» ՀԷԿ-ից ներքև դիտակետերի, 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս: Որոտան գետի ջրի որակը Սիսիան քաղաքից վերև հատվածում՝ «միջակ»՝ 3-րդ դաս է՝ պայմանավորված մանգանով, վանադիումով և երկաթով, Սիսիան գյուղից ներքև և Տաթև գյուղի ՀԷԿ-ից ներքև հատվածներում՝ «անբավարար»՝ 4-րդ դաս՝ պայմանավորված մանգանով, իսկ նույն դիտակետերում գետի ջրի ընդհանրական դասը 5-րդ է՝ պայմանավորված վանադիում, կոբալտ, երկաթ, բարիում, մանգան իոններով և թթվածնի քիմիական պահանջով:

- Սիսիան գետի ջրի որակը, ըստ Արևիսից վերև և գետաբերանի դիտակետերի, 2-րդ դասից դարձել է 3-րդ դաս և 3-րդ դասից՝ 4-րդ դաս: Սիսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև ընկած հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և մանգանով: Գետի ջրի ընդհանրական դասը 4-րդ է:

- «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի դիտարկումների համաձայն՝ Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքախորշերից հոսող հանքաջրերն

<sup>5</sup> <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/Annual-2020.pdf>

<sup>6</sup> <http://armmonitoring.am/page/61>

անմիջականորեն թափվում են Կըշկոշտի գետ: Դաստակերտի վթարային պոչամբարն աղտոտում է Այրի գետը:

- Մարջանի լցակայաններից արտազատվող ծանր մետաղները և տոքսիկ նյութերն անձրևաջրերի հետ հոսում և թափվում են Միսիան գետ և վերջինիս Մավվարդ վտակ, որոնց ջրերով իրենց հողերն են ոռոգում Արևիսի բնակիչները:
- Դարբասում չկա կենտրոնացված կոյուղի և մաքրման կայան, կեղտաջրերը թափվում են Լորագետ:
- Ըստ Միսիանի 2017-2021թթ. զարգացման ծրագրի՝ մաքրման կայանի բացակայության պատճառով կեղտաջրերը և արտադրական թափոնները թափվում են Որոտան գետ: Ծրագրում նշվում է Որոտան գետի «Ջրային հայելիներ» հատվածի մաքրման առաջնահերթությունը:

### **Համայնքի տարածքում արտադրական թափոնների և հանքարդյունաբերական լցակայանների առկայությունը**

- Արևիսում առկա են 1959-1992թթ-ին Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքային դաշտի տարածքում կատարված որոնողական և երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում առաջացած լցակայաններ և թափոններ, որոնք մինչ օրս ռեկուլտիվացված չեն և համարվում են տիրազուրկ<sup>7</sup>:
- Դաստակերտում խորհրդային տարիներին Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման արդյունքում առկա են լցակայաններ, որոնք իրենցից շրջակա միջավայրի աղտոտման լուրջ վտանգ են ներկայացնում: Իսկ նախկին պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարից շարունակվում է թունավոր նյութերով շրջակա միջավայրի աղտոտումը: Դաստակերտի 2017-2021թթ. զարգացման ծրագրի համաձայն՝ համայնքի սպառնալիքներից է պոչամբարի ջրահեռացումը: Պոչամբարի նախագծային հզորությունը եղել է 3,1մլն. խմ, փաստացի լցված է 1,5 մլն. խմ, պատվարի բարձրությունը կազմում է 30մ, լցման մակերեսը մոտ 3.85 հա: Մի քանի տարի է, ինչ պոչամբարի դերիվացիոն համակարգի քայքայման արդյունքում գետը պոչամբարը քայքայելով առու է բացել պոչամբարի մեջ: Տեղանքի մակերեսի որոշ մասեր քայքայվել են՝ առաջացնելով խոռոչներ: Ըստ Շրջակա միջավայրի նախարարության 2019թ. կատարած հետազոտությունների՝ պոչամբարում կուտակված են AL Si, SI, K, Ca, Ti. Fe, Mn. Ni. Cu, n. As. Rb. Sr. Y. Zn. Nb. Mo. Th քիմիական էլեմենտներ և նրանց միացություններ <http://env.am/storage/files/ynderq-nakharari-hraman337.pdf>:

### **Աղբահանության վիճակը համայնքում**

<sup>7</sup> [http://env.am/storage/files/hashvetvutyun-geraka-kayq\\_1.pdf](http://env.am/storage/files/hashvetvutyun-geraka-kayq_1.pdf) , <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/marjanreportnew>

Միսիանում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպվում է «Միսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի կողմից:

Ույծում աղբահանության աշխատանքները կազմակերպվում է «Ույծի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի կողմից:

Աղիտում չի կատարվում կազմակերպված աղբահանություն:

Անգեղակոթում աղբահեռացում չի կազմակերպվում:

Շաղատում առկա է աղբի հեռացման համար ֆինանսական միջոցների սղություն:

Վաղատինում առկա է աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների ցածր մակարդակ:

Դարբասում 2013 թվականից իրականացվում է աղբահանություն՝ շրջիկ անվավոր տրակտորի միջոցով: Աղբը տեղափոխվում է համայնքի տարածքում գտնվող այդ նպատակի համար հատկացված համապատասխան աղբավայր:

Ըստ Նժդեհի զարգացման ծրագրի՝ համայնքի զարգացման անմիջական նպատակներից է աղբահանությունը և սանիտարական մաքրումը:

Շենաթաղում և Լորում, ըստ զարգացման ծրագրերի, աղբավայր չլինելը վնասում է բնությանը և շրջակա միջավայրին: Որևէ կազմակերպության կողմից աղբահանություն չի իրականացվում: Բնակչությունն ինքն է կազմակերպում աղբահանությունը սեփական միջոցներով: Աղբամանների և աղբահավաք մեքենայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում համայնքի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

Արևիսի նպատակներից է համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, իսկ Թասիկինը՝ հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրերից ու միջոցառումներից է աղբահանության կազմակերպումը:

### **Հողերի աղտոտվածության մակարդակը՝**

Ինչպես Միսիան և Դաստակերտ քաղաքներում, այնպես էլ համայնքի մնացած բնակավայրերում **ՀՀ** **ՇՄՆ**

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը<sup>8</sup> հողերում աղտոտիչների բաղադրության չափումներ չի իրականացնում: Սակայն, ըստ նախարարության կայքի, Դաստակերտի լքված պոչամբարի տարածքից վերցված նմուշներում հայտնաբերվել են մարդու առողջության և շրջակա միջավայրի աղտոտվածության վրա ազդող մի շարք քիմիական նյութեր<sup>9</sup>:

### **Տվյալներ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի վերաբերյալ**

Միսիան համայնքի 2020թ. բյուջեի եկամտային մասը կազմել է ընդամենը 1 833 053,3 հազ. դրամ (վարչական մաս՝ 1 273 958,2 հազ.դրամ, ֆոնդային մաս՝ 830 721,5.դրամ, որից սեփական եկամուտները՝ 405 878,6 հազ. դրամ (գույքահարկ՝ 110 065,3 հազ.

<sup>8</sup> <http://www.armmonitoring.am/page/29>

<sup>9</sup> <http://env.am/storage/files/ynderq-nakharari-hraman337.pdf>

դրամ, հողի հարկ՝ 80967,2 հազ. դրամ, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 7500,0 հազ. դրամ.....): Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, 0 դրամ: Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, 0 դրամ: Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ՝ 916 309,8 հազ. դրամ: Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ՝ 0 դրամ: Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 5 403,5 հազ. դրամ: Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 47851,5 հազ. դրամ: Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, 552 902,9 հազ. դրամ:

Միսիան համայնքի 2021թ եկամտային մաս՝ ընդամենը՝ 1 896 843,0 հազ. դրամ (վարչական մաս՝ 1 273 958,2 հազ. դրամ, ֆոնդային մաս՝ 409 028,1 հազ. դրամ), որից սեփական եկամուտներ՝ 405 878,6 հազ. դրամ (գույքահարկ՝ 102229,8 հազ. դրամ, հողի հարկ՝ 89332,5 հազ. դրամ.....): Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, 0 դրամ: Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, 0 դրամ: Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ՝ 102229,808 հազ. դրամ: Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ՝ 1 634,8 հազ. դրամ: Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 1 634,8 հազ. դրամ: Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 52176,5 հազ. դրամ: Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, 325 475,0 հազ. դրամ:

### **Համայնքի տարածքում իրականացված և նախատեսվող սուբվենցիոն ծրագրերի մասին**

#### **2020թ. Միսիան համայնքում իրականացվել են հետևյալ ծրագրերը՝**

1. Միսիան համայնքի «Որոտնավան և Վաղատին բնակավայրերում նախադպրոցական կրթության ապահովում, Միսիան համայնքի թիվ 2 և թիվ 3 ՆՈՒՀ-երի, Նորավան, Շամբ և Տոլորս բնակավայրերում գտնվող խմբերի վերանորոգում և գույքի արդիականացում» ծրագիր, 163529701 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափը՝ 115 798 333 դրամ:

2. «Միսիան համայնքի Սայաթ-Նովա, Շահումյան, Ա. Մանուկյան փողոցները, Մյունիքի փողոցից Ույծ բնակավայր տանող ճանապարհահատվածի և Շաքի

բնակավայրի կենտրոնական փողոցի հիմնանորոգում» ծրագրի բյուջեն՝ 550438713, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափը՝ 311 234 405 դրամ:

3. «Միսիան քաղաքի Միսական 31 հասցեի վարչական շենքի, Որոտնավան բնակավայրի վարչական շենքի տանիքի, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի և գեղարվեստի դպրոցի շենքերի տանիքների վերանորոգում» ծրագրի բյուջեն՝ 56 977 658 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափը՝ 25 542 577 դրամ:

4. Միսիան համայնքի «Լուսավորության համակարգի ընդլայնում Աշոտավան, Անգեղակոթ, Շաղատ, Իշխանասար, Ախլաթյան, Թասիկ բնակավայրերում և Միսիան քաղաքում» ծրագրի բյուջեն՝ 154 980 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափը՝ 96 101 050 դրամ:

### **2021թ. հաստատվել են հետևյալ ծրագրերը՝**

1. «Միսիան համայնքի «Միսիան քաղաքի Միսական 13, Ն.Ադոնցի 6, Միսիական 34, Չարենցի 2, Չարենցի 4, Չարենցի 6, Չարենցի 8, Խանջյան 1, Խանջյան 3, Խանջյան 5, Խանջյան 7 և Որոտան 7 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում»- ծրագրի ընդհանուր արժեքը՝ 209489230 դրամ, համայնքի ներդրումը՝ 115217276 դրամ, պետական ներդրումը՝ 83797492 դրամ, այլ ներդրող՝ 10474461,5 դրամ:

2. «Միսիան համայնքի «Նար-Դոս փողոցի, Նար-Դոս – Գ.Նժդեհ ճանապարհահատվածի, Խանջյան փողոցի վերջնամասի, Բաֆֆու փողոցի մի հատվածի, Ն.Ադոնցի փակուղու, Ա.Մանուկյան փողոցի մայթերի և վաքերի, Գայի 3, 4, Խանջյան 1ա, 3ա, Հ.Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10 բազմաբնակարան շենքերի հարակից փողոցների, Որոտան 1, 3, 5, 7, Որոտան 2, 4, 6, 8 բազմաբնակարան շենքերի հետնամասի, Բոնակոթ բնակավայրի Վ.Ոսկանյան փողոցից դպրոց տանող ճանապարհահատվածի հիմնանորոգում» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 782331000 դրամ, համայնքի ներդրումը՝ 469398600 դրամ, պետական ներդրումը՝ 312932400,0 դրամ:

**Ազդակիր Միսիան համայնքում գործող բիզնեսի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում կատարված աշխատանքների/ծրագրերի մասին**

I. «Մարջան Մայնինգ Քոնփանի» ՍՊԸ-ն իր 13.12.2012թ. ՇԱԹՎ-29/398 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ չէր նախատեսել:

II.«Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ն իր 07.11.2012թ. ՊՎ-174 ընդերքօգտագործման պայմանագրով Դաստակերտ համայնքի նկատմամբ ստանձնել էր հետևյալ սոցիալական պարտավորությունները՝



1. Յուրաքանչյուր տարի հատկացնել 400,0 հազ. դրամ՝ համայնքի զարգացման տնտեսական ծրագրերին մասնակցություն:

2. Յուրաքանչյուր տարի ցուցաբերել 4000,0 հազ. դրամ ֆինանսական աջակցություն՝ դպրոցի և մանկապարտեզի համար գրենական պիտույքների ձեռք բերման, շենքերի վերանորոգման համար:

3. Յուրաքանչյուր տարի Դաստակերտի ջրահավաք և ջրամատակարարման համակարգի բարելավման համար հատկացնել 12000.0 հազար դրամ:

4. Ըստ անհրաժեշտության համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման համար տրամադրել տեխնիկական միջոցներ:

Համայնքների նկատմամբ ստանձնած պարտավորություններից փաստացի 2018թ. ընկերությունը 60142400,0 դրամ գումարի սոցիալական աջակցություն է տրամադրել համայնքների խոշորացումից հետո ազդակիր դարձած Միսիան համայնքին, որից 26,0 մլն. դրամը մասնահանվել է Դաստակերտ քաղաքին:

**III. «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն 2017-2021թթ. Միսիան համայնքի տարածքում իրականացրել է հետևյալ սոցիալական ծրագրերը՝**

2017թ.

1.«Ինժեներական լաբորատորիայի ստեղծում Դարբաս գյուղում», (դասասենյակի վերանորոգում)», ծրագրի արժեքը՝ 4,930 հազ. դրամ:

2. «Դասասենյակի վերանորոգում ինժեներական/լեզո լաբորատորիայի համար», գ. Բոնակոթ, ծրագրի արժեքը՝ 3,740 հազ. դրամ:

2018թ

1. «Ք. Միսիանի թիվ 2 ՆՌԻՀ-ի խմբասենյակի վերանորոգում, ծրագրի արժեքը՝ 7,499 հազ. դրամ:

2. «Ինժեներական լաբորատորիային կահույքի նվիրաբերում», (1 եռաչափ տպիչի, 1 շաղափային հաստոցի, 10 համակարգչային սեղանների և 20 համակարգչային աթոռների նվիրաբերում), գ. Բոնակոթ, ծրագրի արժեքը՝ 1.250 հազ. դրամ:

2019 թ.

1. Միսիան համայնքի գ. Լծենում իրականացրել է «Փողոցային լուսավորության ապահովում Լծեն գյուղի համար» ծրագիրը, որի արժեքն էր 6,900 հզ.դրամ:

2. «Ծառատունկ Միսիան համայնքում» ծրագրի արժեքը՝ 123 հազ. դրամ:

2020թ.

1. «Աջակցություն անվտանգ կրթության ապահովմանը» (32հ ձեռքերի ախտահանման սենսորային դիսպենսերների, 32 հատ բժշկական ինֆրակարմիր

ջերմաչափերի և 15h սպասք լվացող մեքենաների նվիրաբերում) ծրագիրը՝ 5.003 հազ. դրամ արժեքով:

2. «Կովիդ-19 պաշտպանության հավաքածուներ ՔԳՀԿ աշխատակիցների և նրանց ընտանիքների համար» (անհատական պաշտպանական միջոցների և մաքրող միջոցների նվիրաբերում) ծրագիր Սիսիան և Գորիս համայնքներում՝ արժեքը 8.09 հազ. դրամ. դրամ 3. «Սիսիան Բժշկական Կենտրոնին բժշկական սարքավորումների նվիրաբերում» (շարական սոնոգրաֆի նվիրաբերում)» ծրագիրը՝ 7,06մլն. դրամ արժեքով:

2021թ.

1. «ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան խոշորացված համայնքի Անգեղակոթ գյուղի հիմնական դպրոցի կահավորում (70 դպրոցական սեղանների և 140 դպրոցական աթոռների նվիրաբերում)» ծրագիրը՝ 5.040 հազ. դրամ:

2. Թափոնների պատշաճ կառավարում Անգեղակոթ և Շաղաթ գյուղերում» (60 աղբամանների նվիրաբերում համայնքին) ծրագիրը՝ 8.0 մլն. դրամ արժեքով:

IV. Համայնքի տարածքում 9 ոչ մետաղական հանքավայր շահագործող կազմակերպություններից 5-ը՝ «Նարեկ-ՍԷԱ» ՍՊԸ-ն, «Կամսար Մակարյան», ԱՁ-ն, «Սիսիան-Շիկ» ՓԲԸ-ն (Շաքիի բազալտ), «Սալբեկա» ՍՊԸ-ն և «Վի Էյջ Սթոուն» ՍՊԸ-ն, իրենց ընդերքօգտագործման պայմանագրերով համայնքի զարգացմանն ուղղված սոցիալական պարտավորություններ չեն ստանձնել:

**«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքին** համապատասխան ընկերությունների կողմից տրված հարկերի հաշվին համայնքում ծրագրեր չեն իրականացվել, ինչը պայմանավորված է նրանով, որ համայնքի տարածքում գործունեություն իրականացնող ընկերությունները ոչ միայն ընդգրկված չեն եղել օրենքով սահմանված կազմակերպությունների ցանկում, այլ նաև այդ տարիներին մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունները չեն աշխատել և բնապահպանական հարկեր չեն վճարել:

Ըստ համայնքի տարածքում մետաղական հանքավայրերի շահագործման իրավունք ունեցած «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ի և «Մարջան Մայնինգ Քոնֆանի» ՍՊԸ-ի՝ ՀՀ ԱՃԹՆ 2018թ. և 2019թ. հաշվետվությունների, համայնքին առնչվող ցուցանիշները՝

**«Մարջան Մայնինգ Քոնֆանի» ՍՊԸ**

Ընկերությունը իր 13.12.2012թ. ՇԱԹՎ-29/398 ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ պայմանագրում չի նախատեսել:

- 2018 թվականին համայնքին գույքահարկ չի վճարել:
- 2018 թվականին համայնքին չի վճարել հողի հարկ:

- Հողամասերի, փոխադրամիջոցների վարձավճարներ չի կատարել:
- 2018 թվականին համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով անհատույց օտարումներ չի կատարել:
- 2019 թվականին ընկերությունը հաշվետվություն չի ներկայացրել:

#### «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ

«Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ն իր 07.11.2012թ. ՊՎ-174 ընդերքօգտագործման պայմանագրով Դաստակերտ համայնքի նկատմամբ ստանձնել էր հետևյալ սոցիալական պարտավորությունները՝

1. Յուրաքանչյուր տարի հատկացնել 400,0 հազ. դրամ՝ համայնքի զարգացման տնտեսական ծրագրերին մասնակցություն:
2. Յուրաքանչյուր տարի ցուցաբերել 4000,0 հազ. դրամ ֆինանսական աջակցություն՝ դպրոցի և մանկապարտեզի համար գրենական պիտույքների ձեռք բերման, շենքերի վերանորոգման համար:
3. Յուրաքանչյուր տարի Դաստակերտի ջրահավաք և ջրամատակարարման համակարգի բարելավման համար հատկացնել 12000.0 հազար դրամ:
4. Ըստ անհրաժեշտության համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման համար տրամադրել տեխնիկական միջոցներ:  
Համայնքների նկատմամբ ստանձնած պարտավորություններից փաստացի 2018թ. ընկերությունը 60142400,0 դրամ գումարի սոցիալական աջակցություն է տրամադրել համայնքների խոշորացումից հետո ազդակիր դարձած Միսիան համայնքին, որից 26,0 մլն. դրամը մասնահանվել է Դաստակերտ քաղաքին:

2019թ. սոցիալական աջակցություն չի տրամադրել:

- 2018 թվականին համայնքին գույքահարկ չի վճարել:
- 2018 և 2019 թվականներին համայնքին վճարել է տարեկան 3615 դրամ հողի հարկ:
- Հողամասերի, փոխադրամիջոցների վարձավճարներ ոչ մի տարի չի կատարել:
- 2018 և 2019 թվականներին համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով անհատույց օտարումներ չի կատարել: